դառնում էր փorէկէնդան, երբ մեծն ու փոքրը մի քանի անգամ օրվա մեջ որչափ կարելի է կուշտ ուտում էին, ժամերն անց էին կացնում ամեն հոգսից ազատ, ուրախ, ամեն աշխատանք թողած։ Երեխաները՝ ձնագնդի ու վեգ, երիտասարդները՝ լախտի, ձիարշավ ու հրացանաձգություն, աղջիկներն ու հարսները՝ կրպրտլախտի[27], սախկալնէրը՝ գյուղի մեծերը՝ կրղէնգի[28] էին խաղում։ Այս խաղերից մի մասն անշուշտ մնացորդ է այն նախնական մագիկ միջոցների, որով շատ վաղ ժամանակներում կամենում էին արագացնել բնության ուրախ հարությունը։

Ամեն տեղ խաղ ու պար, խրվլիկ տալ՝ առավոտից մինչև կեսգիշեր թե՛ կանանց և թե՛ տղամարդկանց ջոկ-ջոկ ընկերական քեֆ։ Ամեն մասնակից բերում էր այդ քեֆին մեկ մrթաբա բրինձ, մի բաժակ յուղ, մեկ շիշ գինի, չորս ձու, լավաշ և այլ մթերք—մրացյալ խնջույքին մասնակցելու համար։ Թեև այլ անգամներն էլ կարելի էր խրվլիկ տալ, սակայն, խրվլիկի բուն օրը Բարեկենդանի կիրակի օրն էր։

Այդ բուն Բարեկենդանի օրը սարքվում էր նաև Փաշա[29], Իշխան, Խան[30] խաղը[31]։ Երիտասարդներն ընտրում էին իրենց միջից սրամիտ ու սրախոս մեկին, հագցնում էին գույնզգույն շորեր, գլխին դնում էին ծակած բրոանի՝ դդում կամ շուռ տված հնացած փափախ, կպցնում էին այծի մազից երկար բեղեր ու մորուք, երբեմն կովի պոչ, կողքից կապում էին որպես գաբբա՝ վառոդաման, ձիու կարկած, առջևից՝ փայտե գörդա՝ երկար թուր, մեջքին՝ մի հին ժանգոտած չախմախի թվանք՝ հրացան, կրծքին՝ զանազան ոսկորներ և խեցիներ որպես շքանշաններ։ Նստեցնում էին իյարած՝ թամքած էշի վրա երեսով դեպի պոչը։ Մի ծառա բռնում էր էշի պոչից, մյուսը՝ ջլավից, մինն էլ գնում էր կողքից և կանգնած ժամանակ սանրում էր Իշխանի, Փաշայի, խանի մորուքը։ Փաշայի բերանը դնում էին երկար շիբուխ՝ բարակ ձող, որի ծայրին ամրացած էր լինում շան կամ կատվի գանգը՝ ծակը վեր դարձրած. այդ ծակը լցնում էին էշի աղբով՝ փէյինավ, վրան ահագին կտոր ածուխ։ Ոտներին հագցնում էին պատռված կոշիկներ՝ ամեն տեսակ պարանի կտորներով կապկրպած։ Մի քանի մարդ յասաուլնէր՝ պահապաններ, փայտե սրերով և կոտրած չախմախի հրացաններով զինված՝ շրջապատում էին Իշխանին, Փաշային։ Ծառաներից մեկը ներկայացնում էր գրագրին՝ միrզային, որը մի մեծ շաքարե թղթից պատրաստած դավթարի՝ մատյանի մեջ ահագին ոսկորի կտորով

---

27 Կրպրտլախտին—կարպետով լախտի խաղում են այսպես. երկու խումբ տղաներ կամ աղջիկներ հինգ-հինգ, յոթ-յոթ հոգի մի «մայր» շօփավ—վիճակով ընտրած՝ որոշում են, թե ո՛ր խումբը պիտի լինի հարձակվող և ո՛րը պաշտպանվող։ Պաշտպանվողները նստում են մի շրջանի մեջ և կարպետով ծածկվում։ «Մայրը» նրանց շուրջը պտտվում է չաթուի-բրդե պարանի մի ծայրից բռնած, մյուս ծայրը նստողների ձեռքին է։ Հարձակվողները լախտէրավ աշխատում են խփել նստածներին, իսկ «մայրը» fo-քացի տալով աշխատում է դիպչել հարձակվողներին։ Եթե դիպավ՝ խմբերի դերերը փոխվում են։ Հարձակվողները նստում են պաշտպանվողների տեղ, իսկ սրանք դառնում են հարձակվողներ։ Կրպրտլախտին՝ առավելապես աղջիկների սիրած խաղն է։ Լախտին ուժեղ զարկում էին այդ կարպետին։

28 Կրղէնգին՝ կաղ արմատից, թե՛ մեծերը և թե՛ փոքրերն են խաղում։ Մեկը մի ոտքի վրա թռչկոտում է, մյուսները նրա վրա հարձակվում և ձեռքով խփում։ Եթե թռչկոտողը կարողանում է ինքը ձեռքով մեկին խփել՝ խփվածն է կաղ-կաղ թռչկոտում և ուրիշներին հետապնդում։ Արծվանիկում այդ խաղը կոչվում է չրխկրլի՝ կաղ։

29 Գորիսում։

30 Արծվանիկում։

31 Հմմտ. СМОМПК, вып. XXV, отд. II, էջ 46։